ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 217

*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի
*ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքը (Մասիս քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ*
*(Մասիս համայնքի (Մասիս քաղաքի) գոտևորման նախագծի մասով)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. *Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքը (Մասիս քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արարատ-1 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

| ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի (Մասիս քաղաքի)<br>Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 03-003-0869-0001 և 03-003-0837-0001 կադաստրային ծածկագրերով, համապատասխանաբար 0.932 հա և 0.11357 հա մակերեսներով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման հողեր | 03-003-0869-0001 և 03-003-0837-0001 կադաստրային ծածկագրերով, համապատասխանաբար 0.932 հա և 0.11357 հա մակերեսներով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արդյունաբերական օբյեկտների հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ապահովելով՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայացված պայմանը (կցվում է):

4. Մասիս համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Մասիս քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի (Մասիս քաղաքի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | |
|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | |
| | *Ե. Վարդանյան* |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | |
| | *Հ. Դավթյան* |

Երևան, «27» «մայիսի» 2024 թ.